ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռ. Ի. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ, Տաշիր-Զորագետ (X դ.—XII դ. սկիզբ), *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 155 էջ.*

Հայաստանում զարգացած ավատատիրության դարաշրջանի առաջին փուլի կեսերին (X դ.) երկրի տարբեր շրջաններում (Վասպուրական, Կարս, Տաշիր-Զորագետ և այլն) առաջացան Բագրատունի հայոց շահնշահին ստորադաս տեղական թագավորություններ, որոնցից վերջինի՝ Տաշիր-Զորագետի, և այդտեղ իշխած Կյուրիկյանների X—XII դդ. պատմությանն է նվիրված զրաքննվող մենագրությունը։ Այդ շրջանում Տաշիր-Զորագետն էական դեր է խաղացել թե՛ հայոց ներքին կյանքում և թե հայ-վրացական հարաբերություններում։ Դրանով պետք է բացատրել այն կարևորությունը, որ ունի այդ երկրամասի և X—XII դդ. այդտեղ գոյատևած քաղաքական կազմավորումների պատմության հետազոտումը հայագիտության և կովկասագիտության համար։ Դեռ 1923-ին Վիեննայի Մխիթարյաններից Ղ. Մովսեսյանը հանդես է եկավ «Լոռի Կյուրիկյան թագավորների պատմությունը» աշխատությամբ, որն արդեն 1927-ին թարգմանվեց ֆրանսերեն։ Վաստակաշատ հեղինակին արժանին մատուցելով հանդերձ, հարկ է նկատել, որ գիտության շահերը պահանջում էին Տաշիր-Զորագետի և Կյուրիկյանների X—XII դդ. պատմության նորովի քննություն՝ հիմքում ունենալով մարքսիստական մեթոդոլոգիան ու սովետահայ պատմագիտության վերջին տասնամյակների նվաճումները։ Այդ խնդրի իրագործմանն էլ ձեռնամուխ է եղել Ռ. Մաքեւոսյանը, միաժամանակ նկատելով, որ ամեն մի երկրի «պատմությունը համակողմանի ուսումնասիրելու համար անհրաժեշտ է քննության տոնել նրա առանձին երկրամասերի անցյալը» (էջ 5)։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է ներածությունից, որին թերևս ավելի կպատշաճեր «Աղբյուրների և գրականության տեսություն» խորագիրը, չորս գլխից և վերջաբանից։ Գրքում զետեղված են նաև գիտական ամեն մի հրատարակության խիստ անհրաժեշտ օգտագործված աղբյուրների և գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկեր, ինչպես նաև Աղստևի հովտի պատմական մի քանի հուշարձանների լուսանկարներ։ Շահեկան կլիներ, եթե գիրքն ունենար նաև հեղինակի տքնաջան տեղագրական պրպտումների արդյունքներն արտացոլող պատմական համապատասխան քարտեզ։

Ներածության մեջ հեղինակը ավել է օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը և նկատել, որ «Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի (IX—XII դդ.) պատմության ուսումնասիրության ներկա վիճակը և շրջանառության մեջ գտնվող աղբյուրագիտական նոր հրապարակումներն են» (էջ 12) իրեն հնարավորություն տվել գրելու խնդրո առարկա աշխատությունը։

Առաջին գլխում, որը վերնագրված է «Տաշիր-Զորագետի պատմաաշխարհագրական սկիզբ», Ռ. Մաքեւոսյանն անդրադարձել է երկրամասի ֆիզիկաաշխարհագրական բնութագրին և փորձել որոշ ճշգրտումներ կատարել Տաշիր-Զորագետի պատմական աշխարհագրության շուրջ։ Նա մասնավորապես մեծ տեղ է հատկացրել Կայան ու Զորոփոր գավառների և Կայան ու Կայծոն բերդերի տեղադրության ճշտմանը։ Աղբյուրների համադրմամբ ու գրականության ուսումնասիրությամբ հեղինակը եկել է այն եզրակացության, որ Կայան գավառը X—XII դդ. կազմել է Աղստև գետի միջին հոսանքի շրջակայքը և այնտեղ գտնվող Աղշկա բերդ կոչվող ամրոցատեղը նույնացրել է Կայան բերդի, իսկ նրան մերձակա այժմ Մանթաշ անունով հայտնի ամրոցատեղը՝ Կայծոն բերդի հետ։ Ինչ վերաբերում է Զորոփոր գավառին, ապա այն, Ռ. Մաքեւոսյանի կարծիքով, քննվող ժամանակաշրջանում կազմել է Կայան գավառի ձախակողմյան հատվածը։

Աշխատության երկրորդ գլխում, որը նվիրված է Գուգարքում Տաշիր-Զորագետի (Կյուրիկյան) թագավորության կազմավորմանը, քննվել է երկու հարց. Տաշիր-Զորագետը Բագրատունյաց ոստանի վարչական մարզ և Տաշիր-Զորագետում թագավորության կազմավորման նախադրյալներն ու ժամանակը։ Այս հարցերի ուսումնասիրությունը հեղինակին բերել է այն համոզման, որ X դ. սկզբից մինչև 966 թ. Տաշիր-Զորագետը եղել է Բագրատունյաց ոստանի

վարչական մարզը, որը կոչված էր նորոգ հայոց պետության սահմանները պաշտպանել Տփխիսի ու Ատրպատականի արաբական ամիրայությունների ոտնձգություններից և սկզբում կառավարվում էր վերակացուների, իսկ ապա՝ թագավորին գահակից թագաժառանգի կողմից։ Այնուհետև Ռ. Մաթևոսյանը մեծ տեղ է հատկացրել կնճռոտ հարցերից մեկի՝ Տաշիր-Զորագետի թագավորության ստեղծման թվականի ճշտմանը։ Բանն այն է, որ խնդրո առարկա տարբերությունը տարբեր թվականներով (979, 980, 982) են նշանակել ոչ միայն այդ հարցով զբաղված հետազոտողները (Մ. Չամչյանը, Ղ. Մովսեսյան, Ի. Դարիբյան), այլև գրախոսվող աշխատության հեղինակը (972, 969)։ Այժմ արդեն, հիմք ունենալով Ամենափրկիչ եկեղեցու կառուցման թվականները (957—966) և այդ տարիներին վերագրելով Տաշիրի եկեղեցական թեմի կազմավորումը, Ռ. Մաթևոսյանը եզրակացրել է, որ Տաշիր-Զորագետի թագավորության կազմավորումը պետք է հաշվել առնվազն 966-ից, քանի որ Տաշիրում թեմ չէր ստեղծվի «եթե չլիներ այն քաղաքական կազմավորումը, որը կարիք ունենար սեփական եկեղեցական թեմի» (էջ 65)։ Հեղինակը միանգամայն ճիշտ է, նկատելով, որ «Տաշիր-Զորագետում թագավորության կազմավորումը մի շարք ռազմաքաղաքական միջոցառումների արդյունք էր, որոնք իրականացվում էին աստիճանաբար, ուստի անհնարին է ցույց տալ նրանց ավարտման որևէ կոնկրետ թվական... ակնհայտ է, որ վերափոխումները տեղի էին ունեցել Աշոտ Գ-ի ժամանակ՝ 957—966 թթ. ընթացքում» (էջ 66)։

Աշխատության երրորդ գլխում հեղինակն արծարծել է երկու հարց. Տաշիր-Զորագետը XI դ. և Կյուրիկյան թագավորության անկումը։ Ռ. Մաթևոսյանին հաջողվել է սպառիչ լուսաբանել Դավիթ Անհողինի ծավալած ռազմաքաղաքական ու շինարարական գործունեությունը և հայոց շահնշահի գահին տիրելու նրա հավակնությունները, որոնք ինչպես հայտնի է, անհաջող ավարտ ունեցան։ Այնուհետև նա անդրադարձել է երկրամասը սելջուկներից պաշտպանելու ուղղությամբ Դավիթ Անհողինի որդի Կյուրիկե Ա-ի գործադրած ջանքերին, մի կողմից Կյուրիկյանների, իսկ մյուս կողմից սելջուկների ու հզորացող վրացական պետության փոխհարաբերություններին։ Հեղինակը իրավացի է, գրելով, որ «Անիի ու Կարսի անկումից հետո Բագրատունիները իշխանությունը պահպանել էին միայն Տաշիր-Զորագետում։ Դավիթ Անհողինի ժամանակ Կյուրիկյանները փորձեցին գլխավորել Հայաստանի քաղաքական կյանքը։ Այդ քաղաքականությունը շարունակվեց Կյուրիկեի ժամանակ, սելջուկների արշավանքներից հետո եղած ժամանակաշրջանում» (էջ 92)։ Աշխատությունը, կարծում ենք, ավելի կշահեր, եթե նրանում նաև քննվեին Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների և Կախեթի նրանց ազգական Կյուրիկյանների կապերը, ինչպես նաև առավել համակողմանի հետազոտվեին Տաշիր-Զորագետի նկատմամբ վրացական պետության ակտիվ քաղաքականության դրդապատճառներն ու հետևանքները։ Այս առիթով պետք է նկատել, որ Ռ. Մաթևոսյանը համամիտ չէ այն հետազոտողներին (Ղ. Մովսեսյան, Հ. Մանանդյան), որոնց կարծիքով «վրացական ճնշումն է եղել Կյուրիկյան թագավորության անկման պատճառը» (էջ 105), գտնելով, որ Տաշիրին ավելի շատ վտանգ էր սպառնում սելջուկների հաճախակի հարձակումներից, «որոնց հետևանքով Կյուրիկեի հաջորդները աստիճանաբար կորցրին իրենց տիրույթները» (էջ 105)։

Գրախոսվող աշխատության վերջին՝ չորրորդ, գլխում հեղինակը քննության առարկա է դարձրել սոցիալ-տնտեսական հարաբերությունները Տաշիր-Զորագետում X—XII դդ.։ Նշելով, որ X դ. երկրի տարբեր մասերում կազմավորվել էին տեղական կամ նահանգային թագավորություններ, որոնց գահակալները վասալական կախման մեջ էին Բագրատունի շահնշահերից, և որ մեր պատմագիտության մեջ դրանց առաջացումը պայմանավորվում է տեղական ավատական հզոր տների կենտրոնախույս ձգտումներով, Ռ. Մաթևոսյանն ընդգծում է, որ Տաշիր-Զորագետի և մյուս թագավորությունների կազմավորման նախադրյալները զգալիորեն տարբերվում էին և որ յուրաքանչյուր երկրամաս ուներ իր առանձնահատկությունները, առաջին հերթին հողատիրական իրավունքի տեսակետից։ Տաշիր-Զորագետի թագավորությունում, գտնում է նա, ինչպես ավատական հողատիրությունը, այնպես էլ կենտրոնական իշխանության հետ տեղական կառավարիչների հարաբերությունները մի քանի էական կողմերով տարբերվում էին Հայաստանի մյուս երկրամասերից։ Ելնելով այս հիմնագրույթից, հեղինակն անցել է Բագրատունյաց ոստանի ներսում առկա հողատիրության կատեգորիաների ճշտմանը։ Ռ. Մաթևոսյանը միանգամայն իրավացիորեն նկատել է, որ քննվող ժամանակաշրջանի Հայաստանում ոչ բոլոր դեպքերում էին տեղական թագավորություններն առաջանում ավատական սեպարատիզմի հետևանքով։ Նա գտնում է, որ Կյուրիկյան (և Կարսի) թագավորությունների կազմավորումը Բագրատունյաց արքունիքի վարչական վերափոխումների արդյունք էր և թելադրված էր պետության շահերով։

Վերլուծելով աղբյուրներում Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների հողատիրության մասին եղած տվյալները, աշխատության հեղինակը հանգել է միանգամայն ընդունելի եզրակացության։ Ըստ նրա, Գուրգենի տիրույթը կոչվել է «հայրենի իշխանություն»։ IX—XI դդ. այդպես են կոչվել այն հողերը, որոնց տերերի իրավունքները պայմանական են եղել և ոչ թե սեփականատիրական։ Նման հողերում՝ «հայրենի իշխանություններում», ավատներն ունեին իշխելու, կառավարելու իրավունք։ Այստեղ «հայրենի» բառը վկայում է, որ այդ «իշխանությունը» եղել է Կյուրիկյանների հայրենիքը, բայց պայմանական-ժառանգական իրավունքով։ Այլ կերպ, Գուրգենը՝ Բագրատունյաց Կյուրիկյան ճյուղի հիմնադիրը, Տաշիր-Զորագետի հայրենատեր չէր և երկիրը ստացել էր իր ազգապետ ու հայրագլուխ հայոց շահնշահից և հենց դրանով էլ տարբերվում էր Սյունիքի ու Վասպուրականի գահակալներից։ Կյուրիկյանները փոխանցում էին իրենց իշխանությունը ժառանգաբար՝ հորից որդի։ Դրանով իսկ նրանք տարբերվում էին վերակացուներից, որոնք այդ արտոնությունը չունեին։ «Ուրեմն,—եզրակացրել է Ռ. Մաթևոսյանը,—«Տաշիր երկիրը» հանձնելով իր տոհմակիցներին, արքունիքը այդ երկրամասը տոհմական ոստանի սովորական վարչական մարզից վերածեց ֆեոդի՝ պայմանական-ժառանգական տիրույթի։ Նման հողերի տերերը պետք է իրենց իրավունքների հաստատումը ստանային գերագույն (սյուզերենից)։ Կյուրիկյանների սյուզերեններն էին հայոց շահնշահները, և Տաշիր-Զորագետի Բագրատունի տիրակալը ենթարկվում էր շահնշահներին, ինչպես կրասերը՝ ավագին, վասալը՝ սյուզերենին։ Նրա հողատիրական իրավունքը և դրա հետ անխզելիորեն կապված վարչաքաղաքական իշխանությունը այդ երկրում պայմանական բնույթ ուներ, քանի որ «Տաշիր երկիր» յուրաքանչյուր նոր կառավարիչ իր իրավունքների հաստատումը պետք է ձեռք բերեր շահնշահից» (էջ 120)։ Հեղինակն իրավացի է, նկատելով, որ X—XI դդ. Հայաստանում թագավորական իշխանությունը եղել է երկու տիպի՝ «պայազատական և արքունատուր պարգև» (էջ 120)։ Նրա կարծիքով պայմանական-ժառանգական իրավունքներով օժտված Տաշիր-Զորագետի տիրակալի թագավորական տիտղոսը պետք է ընկալել ոչ թե որպես «միապետ», պետության ղեկավար, այլ որպես դասային տիտղոս, իսկ «թագավորական իշխանությունը»՝ որպես բարձրաստիճան պաշտոն։ Սա ուշագրավ եզրահանգում է և առ այսօր տեղական թագավորությունների պատմությամբ զբաղվողներն այդ հարցի վրա ուշադրություն չեն դարձրել։

Աշխատության մեջ որոշ տեղ է հատկացվել Տաշիր-Զորագետում X—XI դդ. գյուղացիության իրավական վիճակում տեղի ունեցած փոփոխությունների քննությանը և նշված դարերում գյուղացիության ճորտացման պրոցեսի խորացումը իրավացիորեն պայմանավորվել է հոգևոր և աշխարհիկ ավատական խոշոր տնտեսությունների ստեղծմամբ։ Ցանկալի կլիներ, եթե հեղինակն ավելի հստակ շարադրեր իր կարծիքը Տաշիր-Զորագետում գյուղական համայնքի և գյուղացիության շերտավորման հարցերի մասին։

Աշխատության վերջաբանում Ռ. Մաթևոսյանը, հանրագումարի բերելով իր հետազոտության արդյունքները, շեշտել է, որ Տաշիր-Զորագետի թագավորության կազմավորման նախադրյալները, հայոց շահնշահների հետ նրա կառավարիչների փոխհարաբերությունների բնույթը, ավատական հողատիրության տեղական առանձնահատկությունները և դրանց հարակից հարցերը կազմում են Տաշիր-Զորագետի թագավորության, որպես ավատական կազմավորման, առանձնահատուկ կողմերը։ Նա նշել է, որ երկրամասի X—XI դդ. կյանքի հետազոտությունը ցույց է տալիս, որ այն անբաժանելի է Բագրատունյաց կենտրոնական պետության սոցիալ-քաղաքական կյանքից։

Գիտական պատշաճ մակարդակով գրված այս աշխատությունը շատ ավելի շահած կլիներ, եթե հեղինակն անդրադառնար նաև քննվող ժամանակաշրջանում Տաշիր-Զորագետի մշակութային կյանքին, որն այդ ընթացքում, ինչպես հայտնի է, զգալի վերելք ապրեց։ Ցավոք, աշխատության մեջ նկատելի են լեզվաոճական ու խմբագրական բնույթի որոշ մեղանչումներ և անգամ ոչ ճիշտ ձևակերպումների հակասականություն։ Այսպես, օրինակ, գրքի 43-րդ էջում կարդում ենք. Տավուշը «զբաղեցնում էր ներկայիս Շամշադինի շրջանի տարածքի մի մասը», իսկ 49-րդ էջում գրված է. «Շամշադինը համապատասխանում է հին Ուտիքի Տավուշ գավառին»։ Իրականում ներկայիս Շամշադինի շրջանը զբաղեցնում է Տավուշ գավառի տարածքի լոկ մի մասը։ Ամփոփելով նշենք, որ գրախոսվող աշխատության մեջ հեղինակի արած հարցադրումներն ու եզրահանգումները գիտական զգալի հետաքրքրություն են ներկայացնում։ Մի շարք առանցքային հարցերի տրված են նոր մեկնաբանություններ։ Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ իր մենագրությամբ Ռ. Մաթևոսյանը զգալի ավանդ է ներդրել Բագրատունյաց Հայաստանի պատմության ուսումնասիրության ամբողջացման շնորհակալ գործում։

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ